ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/2.6-26
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. մարտի 9-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով մրցույթին ներկայացվել է 2 (երկու) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկներով՝

- «ԲՈԳՈՍՍԻ» ՍՊԸ-ի (14,980,000.0 (տասնչորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- «Նիկոն» ՍՊԸ-ի (15,000,000.0 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)) կողմից:

Լսեցին՝

Հայտերի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հայտերի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2026թ. մարտի 12-ը, ժամը 15^{00}-ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2026թ. մարտի 12-ին, ժամը 15^{00}-ին:

Ս.Հակոբյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Ա.Բաբայան - _____

Ա.Ոսկանյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Շ.Հովսեփյան - _____